

հայ երկրի շատ կողմերը արագիւն կը զբռնուի, բայց բուն իւր սիրած երկիրն է Վան։ Վայրենի և ընտանի Սաղերն, վայրենի և ընտանի Քաղերն, Կոցարն և Կոցարակ և վերջապէս Հաւալուն և Հրաթոչունն առատութեամբ և խմբովին կը զարդարեն հայրենեաց շատ մի կողմերու լճերն և մօրերն, ինչպէս փարպեցին Ղազար իսկ կը լիշէ զանոնք իւր Արարառայ վաշտի նկարագրութեան մէջ։

Անցնինք վերջապէս գրկելու և համբուրելու այն հաւն՝ որուն բնաշխարհիկ լինելն փառք է հայրենեաց։ Բանաստեղծը չի նուագած զայն՝ չի համբուրեր իւր զփինէ պսակն, թոչնաբանը իւր ամէն հրապուրիչ ածականները ասոր կը սեփականէ՝ և զեռ չի բաւականանար արժանապէս նորա գեղեցկութիւնը ցոյց տալու։ Սա է այն հաւը՝ որ իւր ներկայութեամբ կը սքնէ լճակներն, աւազանները և բուրաստանները՝ ուր կը յաճախէ։ Կարապէս է Աստղիան կառածիզ հաւն, որուն վրայ մեծ կենդանաբանն ապշելով կը գրէ. «զարմանալի է, սիրելի և ծափահարութեանց արժանի»։ Այսպիսի ընդհանուր բանաստեղծից ուշադրաւ հաւ մը մեր երկրին հայրենակից լինելուն թող վկայ լինի Սիւնեցին Առաքել. «Կարապէս մեծ հաւ է որպէս զոչխար մի, և բովանդակ սպիտակ, որպէս զձիւն. և լինի ի ծով Գեղարբունի»։

Ի՞նչ կը պատմեն ասոր վրայ հին մասերնապիքք Ուլիպիոս և Կիկերոն, Լուկրետիոս և Էրիպիդէս. կ'ըսեն, Կարապի ձայնը շատ ներզաշակ է և ախորժելի, հոգեվարքի ժամանակ կ'երդէ, իւր տխուր և փափուկ կենաց վերջին ողջոյնը տալով։ Իւր վերջին ողջոյնն առնելով, մենք ալ մեր վերջին ողջոյնը կու տամք իրեն և իւր տոհմին քաջ զուսանաց։

Հ. ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆ



ՎԵՆԵՏԿՈՅ ԿՈՃԱՍԻՆ ՄԻ ԱՆԴՈՍՆ

ՎԵՆԵՏԻԿ թէ և կարուսած է իւր համակրելի գուքներն, և անցեալ վարչական փառքն, այլ կը պահէ ուսումնականաց ժողով մը, որ իրեն մեծ պատիւ է, և արդի գիտնական դարուն մէջ՝ իրեն անհրաժեշտ կարևոր։ Այժմ չեմ ուզեր շօշափել այս ուսումնական կաճառին պատմութիւնը, այլ լսի իւր արդիւնաշատ անձնաւորութեան մին, Պրոֆ. Գէզա, որ մեզ կը յիշեցնէ իւր լեզուագիտութեամբ զՄեծսփանթէ։ Այս մեծ ուսուցչապետն, որ լսիկ մեջիկ կը մշակէ հնապարիսպ Պատուինի երիտասարդ մտքերը, ինքնին շարժառիթ եղաւ սոյն փոքրիկ յօդուածին։

Սա, ինչպէս ծանօթ է մեր ընթերցողաց, քաջ հայագէտ է և զուտ հայասէր՝ իրեն այցելողը կը գանէ զինքը զըքերու մէջ թաղուած. իւր աշխատութեան սենեակներն բաց ի առատութէն՝ միւս ամէն մի անկիւն, խորշ և որմ՝ զըքերով ծածկուած են. այցելողին ստուըններն չեն կարող ազատութեամբ շարժիլ, զըքերու կը զարնուին, բայց չի կարծուի խառնիխուռն նետուած, այլ ամէնն այլ կոկիկ շարուած, և ըստ նիւթոյ և լեզուաց զատ զատ դարաններու մէջ գետեղուած։ Չերկարի մեր յօդուածը թուելով իւր գիտցած լեզուներուն անունները. անցուր մտքէդ ընթերցող, ամբողջ քեզ ծանօթ լեզուներն և անծանօթներէն այլ մի քանին հարցնուր հմտագունի մը. նա այդ ամէն լեզուներն կը հասկընայ, կը թարգմանէ, և զանոնք գատելով կ'ընթեռնու։ Մեր նախնեաց լեզուին արդէն քաջ ծանօթ է, այժմ աշխարհիկ լեզուն կը մշակէ, և մեծ սէր և ջանք կը յայտնէ հմտանալու նա և մեր դաւառալին բարբառոց. մեր լեզուի այս երրորդ մասին սիրահարութենէն մղուած՝ կը խնդրէ մեզմէ Հայրոչաակ՝ վերնազրով գրած յօդուածին մէջ յեշտակած և առ վ. հ. Ալիշան ուղղեալ դաւառիկ նամակին՝ արդի սովորական աշխարհաբար լեզուի թարգմանութիւնը. զոր ահաւասիկ կը հրատարակեմք, և այս էր մեր յօդուածին էական նպատակն։

«Սիրուն վարդապետ

Մենք գիտուն մէկը չենք, և թէև բան մը չենք գիտեր, բայց բանիւնն մարդիկները շատ կը սիրենք և կը մեծարենք։

Մեր վարդապետը ու վարժապետը իրարու հետ բան մը կը խօսէին, խորհուրդ կը կա-

* Բազմալիկ, յունիսի պրակ, 288։